# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք

«29» նոյեմբեր 2019թ

N 97-Ա

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-084-0026-0001 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նինա Անուշավանի Հակոբյանի կողմից ներկայացված դիմումը, 14.11.1986թ. կազմված անշարժ գույքի տեխնիկական անձնագիրը, 28.11.2019թ. թիվ 7467 գրանցամատյանով հաստատված ըստ օրենքի ժառանգության վկայագիրը, §ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ¦ ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, §Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին¦ ՀՀ օրենքի 2-ին և 3-րդ հոդվածներով, §Տեղական ինքնակառավարման մասին¦ ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ`

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  ԵՄ

1. Վերականգնել Շահումյան համայնքի 06-084-0026-0001 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 897.3 քմ բնակելի կառուցման հողամասի հողհատկացման հիմքերը`
   ա/ Շահումյան համայնքի 06-084-0026-0001 կադաստրային ծածկագրի հողամասի մակերեսը 897.3 քմ
   բ/ Հողամասի սահմանները որոշվում են «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի համաձայն:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 897.3 քմ մակերեսով հողամասից` 600.0 քմ օրինական հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասեր ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Նինա Անուշավանի Հակոբյանին, իսկ մինչև 15.05.2001թ. զբաղեցրած և առ այսօր օգտագործվող առանց իրավունք հաստատող փաստաթղթերի 297.3 քմ մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք, անհատույց սեփականության իրավունքով հատկացնել` Նինա Անուշավանի Հակոբյանին և մինչև 15.05.2001թ. վերը նշված հողամասում կառուցված բնակելի տան նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:
3. ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի 06-084-0026-0001 կադաստրային ծածկագրի հողամասի վրա, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու

քմ ներքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկի նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել՝ Նինա Անուշավանի Հակոբյանի սեփականության իրավունքը:

4. Հաստատել վերը նշված անշարժ գույքի փոստային հասցեն՝ ՀՀ Մարզ Լոռի համայնք Շահումյան 2-րդ փողոց թիվ 1 բնակելի տուն:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է.ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 98-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 'Տեղական ինքնակառավարման մասին' ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 կետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

Շահումյան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, կադաստրային քարտեզի 06-084-0201-0007 ծածկագրից տարանջատվող 0.05787 հա գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասին տրամադրել Շահումյան համայնք Դիլիջան մայրուղի 3 փկղ 1/1 հող փոստային հասցե:

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 03
գ. Շահումյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 99-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 'Տեղական ինքնակառավարման մասին' ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 կետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

Շահումյան համայնքի վարչական սահմաններում գտնվող Պետրոս Սուրենի Ղազախեցյանին սեփականության իրավունքով պատկանող, կադաստրային քարտեզի 06-084-0012-0006 ծածկագրի տակ գտնվող 0.1464 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել Շահումյան համայնք 12 փող. 5 փկղ. 5 հող փոստային հասցե:

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 03
գ. Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N100-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 'Տեղական ինքնակառավարման մասին' ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 կետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ

Շահումյան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, կադաստրային քարտեզի 06-084-0201-0007 ծածկագրից տարանջատվող 0.06127 հա գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասին տրամադրել Շահումյան համայնք Դիլիջան մայրուղի 3 փկղ 17 հող փոստային հասցե:

**Համայնքի ղեկավար՝** ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 03
գ. Շահումյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 101-Ա

06-084-0309-0057 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԽՈՏՀԱՐՔԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի, 64-րդ հոդվածի 8-րդ, 16-րդ կետերով, "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, հաշվի առնելով Շահումյան համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 05.04.1991թ-ի 07 որոշումից քաղվածքը, Միշա Գրիգորի Դոխոյանի դիմումը համայնքի տարածքում սեփականության իրավունքով իրեն պատկանող 06-084-0309-0057 ծածկագրով 1.466 հա խոտհարքի հողօգտագործման իրավունքը ձևակերպելու մասին և քանի որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, և այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, կառուցված չէ քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Շահումյան համայնքի տարածքում 06-084-0309-0057 ծածկագրով 1.466 հա խոտհարքի սահմանները համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. Վերականգնել Միշա Գրիգորի Դոխոյանին /ծնված 02.02.1941թ./, Գրիգորի Միխայիլի Դոխոյանին /ծնված 08.12.1977թ./ և Մարիա Միխայիլի Դոխոյանին /ծնված 12.03.1975թ./, սեփականության իրավունքով պատկանող 06-084-0309-0057 ծածկագրով 1.466 հա խոտհարքի հողհատկացման հիմքերը, համաձայն հատակագծի:

3. Հաշվի առնելով, որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի հողերի կազմում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ճանաչել Միշա Գրիգորի Դոխոյանի, Գրիգորի Միխայիլի Դոխոյանի և Մարիա Միխայիլի Դոխոյանի սեփականության իրավունքը 06-084-0309-0057 ծածկագրով 1.466 հա խոտհարքի նկատմամբ:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթերանշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

**Համայնքի ղեկավար՝** ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 05
գ. Շահումյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 102-Ա

### ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Շահումյան համայնքի ավագանու 13.04.2017թ-ի ,,ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման իրականացման կարգը սահմանելու մասին,, թիվ 15-Ա որոշմամբ, հաշվի առնելով Շահումյանի միջնակարգ դպրոցի տնօրեն Ռ. Հարությունյանի 04.12.2019թ-ի թիվ 77 գրությունը, համայնքի բնակիչների դիմումները, համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննող հանձնաժողովի,, եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Շահումյան համայնքի 2019թ-ի բյուջեի բաժին 10, խումբ 7, դաս 1, հոդված 472900-ով նախատեսված գումարից թվով 6 /վեց/ ընտանիքների հատկացնել սոցիալական օգնություն ընդամենը 115000 /մեկ հարյուր տասնհինգ հազար/ ՀՀ դրամ՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 05
գ. Շահումյան

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի ղեկավարի
2019 թվականի դեկտեմբերի 05-ի N 102-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Բուղդադարյան Կարինե - 40000 /քառասուն հազար/ դրամ
2. Գյուլբեկյան Ամալյա - 15000 /տասնհինգ հազար/ դրամ
3. Էվինյան Նաիրա - 15000 /տասնհինգ հազար/ դրամ
4. Մաթևոսյան Սվետլանա - 15000 /տասնհինգ հազար/ դրամ
5. Հովսեփյան Կարինե - 15000 /տասնհինգ հազար/ դրամ
6. Սուքիասյան Կալեպսի - 15000 /տասնհինգ հազար/ դրամ

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԻՆԱՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 103-Ա

ԾՈՎԱԿ ԱՆԱԴՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ, ՀՍՏԱԿԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետով, ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7 հոդվածի 1 կետով, ՀՀ հողային օրենսգրքով, ՀՀ ԱԳԿ կոմիտեի նախագահի,, Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը կատարելու մասին,, 01.06.2010թ. թիվ 186-Ն հրամանով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղաքացի Ծովակ Անադյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման թիվ 1873400 վկայականը, համայնքի կադաստրային քարտեզը, Արսեն Իսահակյան ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի 06-084-0090-0009 ծածկագրում գտնվող հողամասի սահմանային չափերը կադաստրային քարտեզում քարտեզագրվել է սխալ գծային չափերով, որի արդյունքում կատարվել է սխալ քարտեզագրում երկու հարևան հողամասերի միջև, մինչդեռ նշված երկու հարևան հողամասերը հատկացման օրվանից մինչ այսօր սահմանազատված են միմյանցից համայնքի ղեկավարի կողմից հաստատված և սույն որոշմանը կից Ա. Իսահակյան ԱՁ-ի կողմից կազմված հատակագծի չափերով և սխալմամբ 06-084-0090-0009 ծածկագրի տակ քարտեզագրված, բայց վերջինիս չպատկանող հողամասը չի տիրապետվում Ծովակ Անադյանի կողմից, այլ փաստացի տիրապետվում և տնօրինվում է Սարո Երազյանի կողմից:

2. Հիմք ընդունելով սույն որոշման 1-ին կետը վերականգնել և օրենքի ուժով 06-084-0090-0009 ծածկագրի տակ գտնվող 0.1998 հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող շինությունների նկատմամբ ճանաչել Ծովակ Անադյանի /ծնված 01.03.1991թ./ սեփականության իրավունքը:

3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:

4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

5. Անշարժ գույքին տրամադրել 2փ. 57տ. փոստային հասցե:

6. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 16
գ. Շահումյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 104-Ա

### 06-084-0090-0005 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետով, իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7 հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, ՀՀ Հողային օրենսգրքով, ՀՀ ԱԳԿ կոմիտեի նախագահի ,,Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը կատարելու մասին,, 01.06.2010թ. թիվ 186-Ն հրամանով, հիմք ընդունելով քաղաքացի Սարո Երազյանի դիմումը, տեխնիկական անձնագիրը կազմված 22.11.1983թ., ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը գրանցամատյան թիվ 3133 02.08.2019թ. Արսեն Իսահակյան ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-084-0090-0005 ծածկագրի տակ գտնվող 0.13424 հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներ և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1965թ. կառուցված 281.3քմ մակերեսով բնակելի տան և 1986թ. կառուցված 44.73քմ մակերեսով ավտոտնակի նկատմամբ Սարո Գևորգի Երազյանի /ծնվ. 1968թ./ սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից հատկացված հողամասն անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել, իսկ հատկացվածից ավել զբաղեցրած հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Սարո Գևորգի Երազյանի /ծնված 04.07.1968թ/ սեփականության իրավունքը:
3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Շահումյան համայնք 2փ. 55 բնակելի տուն:
6. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 31.10.2018թ. թիվ 86-Ա որորշումը:
7. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 16
գ. Շահումյան